ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1963 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այսօր էլ մեր երիտասարդ սերունդը սիրով է թերթում և ուսումնասիրում սովետական հասարակության պատմության այն էջերը, որոնք մասնավորապես վերաբերում են Անդրկովկասյան ֆեդերացիային։

Մեր հետաքրքրասեր հասարակայնությունը վաղուց էր սպասում թարմ խոսքի անդրկովկասյան ժողովուրդների ազատագրման, նրանց պետական միության ստեղծման ու լենինյան կուռ բարեկամության ամրապնդման մասին։ Այս առումով ուշագրավ ու օգտակար է Հայպետհրատի կողմից հրատարակված պրոֆ. Վ. Ա. Պարսամյանի աշխատությունը։

Պետք է ասել, որ հեղինակը այս հարցին անդրադառնում է երկրորդ անգամ։ Սակայն, ի տարբերություն 1935 թ. տպագրված նրա նույնանուն աշխատության, սույն գրքում Վ. Պարսամյանը համոզիչ փաստերով ու օրինակներով գիտական խոր վերլուծության է ենթարկում ու լուսաբանում այն հիմնական դրդապատճառները, որոնք կյանքի կոչեցին Անդրֆեդերացիան։ Այդ մասին անցյալում հրատարակված գրքերի համեմատությամբ, որոնց վրա իր կնիքն էր դրել անհատի պաշտամունքը, տվյալ աշխատության մեջ գիտական բարեխղճությամբ բացահայտվում է օբյեկտիվ ճշմարտությունը, վեր է հանվում ու ընդգծվում Վ. Ի. Լենինի մեծագույն դերը, որպես ՍՍՌՄ-ի ստեղծողի, անդրկովկասյան ժողովուրդների ազատարարի ու նրանց բարեկամության մեծ ոգեշնչողի։

Գրքում արժանի տեղ են գտել երկու նոր բաժիններ։

Հեղինակը ճիշտ է վարվել՝ իր ուսումնասիրությունը սկսելով «Վ. Ի. Լենինը և անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական պայքարը» նոր բաժնով, որտեղ նշվում է, որ Անդրկովկասի միացումը Ռուսաստանին պատմականորեն առաջադիմական երևույթ էր, որը հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդներին ազատում էր պարսիկ խանների ու թուրք փաշաների բարբարոսական ճնշումից, նրանց կողմից ֆիզիկապես ոչնչացվելու վտանգից։ Խոսելով երկու Ռուսաստանի մասին, հեղինակը ընդգծում է դեկաբրիստների ու Գրիբայեդովի դեմոկրատական Ռուսաստանի դերը, որի լավագույն զավակների հետ համատեղ ազատասեր ու հայրենասեր հայերը, վրացիները, ադրբեջանցիները պայքարում էին իրենց երկրների անկախության և միաժամանակ, ցարիզմի ազգային-գաղութային ճնշումից ազատագրվելու համար։ Դա կլիներ լավագույն ելքը տվյալ ժամանակաշրջանում։ Պրոֆ. Վ. Պարսամյանը մարքս-լենինյան դիրքերից քննադատում է ազնվական և բուրժուական պատմագրության այն սխալ տեսակետը, որ իբր Անդրկովկասի ժողովուրդների անցումը ցարիզմի տիրապետության տակ բացարձակ բարիք էր և միակ լավագույն ելքը նրանց համար։

Մեջ բերելով Մարքսի և Էնգելսի այն ասույթը, որ Արևելքի երկրների նկատմամբ Ռուսաստանը պրոգրեսիվ դեր է կատարել, միաժամանակ հեղինակը ցույց է տալիս, որ մարքսիզմի կլասիկները անողոք քննադատության են ենթարկել ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությունը և չերմորեն պաշտպանել ճնշված ժողովուրդների ազատության ու անկախության գաղափարը։

Վ. Ի. Լենինը ռուսական մարքսիստներից առաջինն էր, որ շարունակելով Մարքսի և Էնգելսի ուսմունքը նոր պայմաններում զարգացրեց այն։ Գրքում լուսաբանվում է Վ. Ի. Լենինի դերը ռուսական կայսրության ճնշված ազգերի, մասնավորապես Անդրկովկասի գաղութային կախվածության պայմաններում ապրող ժողովուրդների ազատագրման գործում։

Ցույց է տրվում Լենինի անձնական, բարեկամական ու գաղափարական սերտ կապերը կովկասցի մի շարք մարքսիստ ռևոլյուցիոն գործիչների՝ Ի. Լալայանցի, Բ. Կնունյանցի, Ս. Շա-

---

1 Վ. Ա. Պարսամյան, Լենինը և Անդրկովկասյան ֆեդերացիան, Երևան, 1962։

հումյանի, Լ. Կեցխովելու, Մ. Ցխակայայի, Ս. Օրջոնիկիձեի, Ս. Սպանդարյանի, Մ. Ազիզբեկովի, Ալ. Մյասնիկյանի և ուրիշների հետ։

Լենինը 1902 թվականին ամբողջ հոդով ողջունում է «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» ստեղծումը և հատկապես նրա Մանիֆեստի հրատարակումը՝ որպես ուշադրավ փորձ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու ուղղությամբ։ Լենինի պարզ ու հստակ դրույթները, ինչպես նշում է հեղինակը, իմաստուն խորհուրդներն ու ցուցումներն ազգային հարցի վերաբերյալ օգնեցին Կովկասի կոմունիստներին հաղթահարելու բուրժուական նացիոնալիզմը, բազմազգ աշխատավորներին համախմբելու և ամուր կանգնելու պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերում։

Աշխատավորական զանվածների լենինյան, ինտերնացիոնալ դաստիարակությունը մեծ չափով խթանում էր ռևոլյուցիոն շարժման զարգացումը։ Վ. Ի. Լենինը բարձր էր գնահատում Անդրկովկասի ժողովուրդների ռևոլյուցիոն պայքարը։ Գրքում արժանի տեղ է հատկացված այդ հարցին։ Պարտիայի 3-րդ համագումարի ընդունած «Կովկասի դեպքերի մասին» բանաձևի նախագծում Վ. Իլյիչը գրում է. «Կովկասի բնակչության մեծամասնության ռևոլյուցիոն տրամադրությունը, ինչպես քաղաքներում, այնպես և գյուղերում, արդեն հասել է համաժողովրդական ապստամբության ընդդեմ ինքնակալության»։ Կոմունիստական պարտիայի և նրա առաջնորդի տիտանական ջանքերը, նրանց ցանած սերմերը միայն իրենց հասուն պտուղները տվեցին։ Մեծ Հոկտեմբերի հաղթանակի շնորհիվ։

Աշխատության մեջ լենինյան դրույթների հիման վրա հանգամանորեն վերլուծվում են հայ ազգային-ազատագրական շարժումները, ցույց են տրվում արևմտահայերի և կովկասահայերի ազգային-ազատագրական և ռևոլյուցիոն շարժումների լական տարբերություններն ու վերջիններիս անխախտելի կապերն Անդրկովկասի և ողջ Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժումների հետ։ Պատշաճ տեղ է հատկացված նաև Բաքվի հերոսական Կոմունայի գործունեությանը, Սովետական Ռուսաստանի կողմից նրան ցույց տրված օգնությանը, ընդգծվում է Լենինի սերն ու հոգատարությունը կոմունայի գործիչների, մասնավորապես Ս. Շահումյանի նկատմամբ։

Ներքին հակառևոլյուցիան, բուրժուա-նացիոնալիստական ուժերը՝ արտաքին իմպերիալիստական սվիններ օգնությամբ երազում էին ետ շրջել պատմության անիվը։ Սակայն այդ նրանց չհաջողվեց։ Ազատարար Հոկտեմբերը հաղթական քայլերով մուտք գործեց նաև Անդրկովկաս։ Նոր դարաշրջան սկսվեց երկրամասի ժողովուրդների պատմության մեջ. բացվեց նրանց նոր կյանքի արշալույսը։

Եթե չլիներ Սովետական Ռուսաստանը,—ասել է Ս. Օրջոնիկիձեն,—չէր լինի Սովետական Ադրբեջանը, Սովետական Վրաստանը, Սովետական Հայաստանը և մինչև այսօր էլ նրանք կլինեին անգլիական իմպերիալիզմի կրնկի տակ։ Այսպես է սկսվում գրքի երկրորդ բաժինը, ուր պրոֆ. Վ. Պարսամյանը նկարագրում է այն պատմական գոյավիճակը, խոր վերլուծության ենթարկում այն դրդապատճառները, որոնք ծնունդ տվեցին Անդրկովկասյան ֆեդերացիային։

Հեղինակը նորահայտ, հետաքրքիր փաստերով մերկացնում ու անարգանքի սյունին է գամում «ազգային ցեղերիս»—դաշնակների, մուսավաթականների, մենշևիկների եղբայրասպան կոտորածների ազգակործան քաղաքականությունը, դրա հետևանքով երկրամասի էկոնոմիկայի քայքայումը, սովն ու համաճարակները։ Առիթը բաց չթողնելով իմպերիալիստական պետությունները, ներքին հակառևոլյուցիոն ուժերի օգնությամբ, ոտնձգություններ էին կատարում սովետական իշխանությունը տապալելու և կապիտալիզմը վերականգնելու համար։ Սակայն Անդրկովկասի կոմունիստները չէին կարող հաշտվել այդ իրավիճակի հետ։ Նրանք այդ ծանր վիճակից ելք էին որոնում ձեռնամուխ լինելով հետևյալ խնդիրների լուծմանը.—պահպանել և ամրապնդել երիտասարդ սովետական ռեսպուբլիկաները, ապահովել երկրի պաշտպանությունը ներքին և արտաքին թշնամիներից, վերացնել բուրժուական նացիոնալիզմը. ազգային թշնամանքի ու անվստահության մթնոլորտը, ամրապնդել Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական կապերը, վերականգնել երկրամասի քայքայված տնտեսությունը, բարելավել աշխատավորների նյութական և կուլտուրական դրությունը։ Այս կարևորագույն և հրատապ մյուս հարցերի լուծումը Անդրկովկասի ժողովուրդներից պահանջում էր ուժերի միավորում։

Իսկ ի՞նչ ուղիով կենսագործել երկրամասի սովետական ռեսպուբլիկաների համախմբումը։ Տվյալ պատմական կոնկրետ պայմաններից ելնելով Լենինը և պարտիան առաջ քաշեցին ֆեդերացիայի հարցը։

Գրքում ըստ արժանվույն լուսաբանվում են Մարքսի, Էնգելսի և Լենինի հայացքները դեմոկրատական ցենտրալիստական ռեսպուբլիկայի և ֆեդերացիայի մասին։ Ընդգծվում է այն միտքը, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո Լենինը պաշտպանում էր պետական ֆեդերա-

ցիայի տեսակետը, ֆեդերացիա, որը հանդիսանում է անցման ձև դեպի տարբեր ազգերի աշխատավորների լիակատար միասնությունը:

Սովետական ֆեդերացիայի ստեղծման ուղղությամբ առաջին գործնական խոշոր քայլը կատարված էր. հանձինս ՌՍՖՍՌ-ի պարտիան արդեն ուներ ազգային հարցի լուծման լավագույն օրինակներից մեկը։ Սակայն յուրահատուկ պայմաններում և այլ հիմունքներով էր տեղի ունենում անդրկովկասյան ռեսպուբլիկաների միավորման պրոցեսը։

Վ. Պարսամյանը բացահայտելով՝ Կովկասի կոմունիստներին Վ. Ի. Լենինի գրած ծրագրային նամակների բովանդակությունը, միաժամանակ համառոտակի ցույց է տալիս Անդրկովկասի պարտիական կազմակերպությունների վիթխարի գործունեությունը՝ այդ ցուցումներն իրականացնելու և Անդրկովկասյան ֆեդերացիան հիմնադրելու ուղղությամբ։ 1921 թ. ապրիլի 9-ին Օրջոնիկիձեին ուղարկված պատասխան հեռագրում Լենինը կտրականապես պահանջում է ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մարզային տնտեսական օրգան։ Ապրիլի 14-ի հայտնի նամակում հույս է հայտնում, որ Կովկասի սովետական ռեսպուբլիկաների սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում2:

Լենինը Կովկասի բոլշևիկներից պահանջում էր ամրապնդել սովետական իշխանությունը, առանց որի անհնարին էր ժողովուրդների բարեկամության ամրապնդումը, չընդօրինակել նույնությամբ ռուս կոմունիստների տակտիկան, իսկույն աշխատել բարելավել գյուղացիների դրությունը, էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքների միջոցով վերածնել երկիրը՝ ապահովելով անցումը դեպի սոցիալիզմ։

Անդրկովկասի կոմունիստները և անպարտիական մասսաները մեծ խանդավառությամբ լծվեցին առաջնորդի պատգամների իրականացմանը։ Հեղինակն իրավացիորեն մատնանշում է բանվոր դասակարգի, մասնավորապես Բաքվի հերոսական պրոլետարիատի ավանգարդային դերը Անդրֆեդերացիայի ստեղծման գործում։

Հայնորեն մեկնաբանում է Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կոմունիստական կազմակերպությունների ու նրանց ականավոր ղեկավարների՝ Օրջոնիկիձեի, Կիրովի, Մյասնիկյանի Նարիմանովի և ուրիշների բեղմնավոր գործունեությունը։ Նրանք լինելով Անդրֆեդերացիայի սյուները—իրենց ուսերի վրա կրեցին նրա կազմակերպման ամբողջ ծանրությունը,—գրում է հեղինակը։

Աննկուն լենինյան Սերգո Օրջոնիկիձեն Անդրկովկասյան ֆեդերացիայի ոգին էր, Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության մեծ մունետիկը (էջ 62). «Վրացի կոմունիստի համար,—ասում էր Օրջոնիկիձեն,—Հայաստանը պետք է լինի այնպիսի հայրենիք, ինչպես և Վրաստանը»: Անդրկովկասի ժողովուրդների լենինյան բարեկամության ջերմեռանդ պաշտպաններից ու փայլուն պրոպագանդիստներից էր նաև Ալ. Մյասնիկյանը։

Հարթ չէր Անդրկովկասյան ֆեդերացիայի ուղին։ Ուսումնասիրության մեջ ցույց են տրվում այն դժվարություններն ու խոչընդոտները, որոնք արգելակում էին այդ մեծ գործին։ Անդրֆեդերացիայի, երկրամասի ժողովուրդների բարեկամության վտանգավոր թշնամիները վրացական նացիոնալ-ուկլոնիստները և մյուս նացիոնալիստներն էին։ Նրանք պարտիայի դեմ գրոհներ սկսեցին և՛ անդրկովկասյան երկաթուղիների, և՛ արտաքին առևտրի միավորման, և՛ միասնական արտաքին քաղաքականություն կիրառելու, մի խոսքով ներքին և արտաքին համատեղ քաղաքականություն վարելու հարցերում։ Այդ վայ-կոմունիստները ժխտում էին Անդրֆեդերացիայի անհրաժեշտությունը, ավելորդ կամ էլ վաղաժամ էին համարում այն։

Գրքում համառոտակի տրված է պարտիական, սովետական այն համագումարների, կոնֆերանսների, խորհրդակցությունների բնութագրերը, որոնք միահամուռ կերպով դատապարտելով նացիոնալիստական թեքումը, սահմանում են, որ Անդրֆեդերացիայի նշանակությունը ամենից առաջ այն է, որ նա լիակատար պայմաններ է ստեղծում նրա մեջ մտնող ռեսպուբլիկաների աղատության ու անկախության պահպանման, տնտեսական ու կուլտուրական ծաղկման, նրանց ժողովուրդների անխախտ միասնության համար։

Հեղինակը նշում է, որ ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թ. նոյեմբերի 3-ի Վ. Ի. Լենինի կազմած նախագծի հիման վրա Կենտկոմի Քաղբյուրոյի նոյեմբերի 29-ի որոշումները, և ապա Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարի բանաձևը բացառիկ կարևոր նշանակություն ունեցան աշխատավորների ինտերնացիոնալ համախմբման, Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմավորման գործում.

Կոմունիստների նախաձեռնությամբ Անդրկովկասի բանվորա-գյուղացիական լայն մասսա-

2 Տե՛ս Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 32, էջ 402։

ների ծավալած միավորման շարժումը հաջողությամբ է պսակվում։ 1922 թ. մարտի 12-ին հիմնադրվում է Անդրկովկասի Սովետական Ռեսպուբլիկաների ֆեդերատիվ Միությունը՝ Անդրկովկասյան ֆեդերացիան, որը նույն թվականի դեկտեմբերի 13-ին ստեղծվում է ԱՍՖՍՌ-ի և մտնում ՍՍՌՄ-ի կազմի մեջ իբրև սովետական հզոր միության իրավահավասար անդամներից մեկը։ Ամփոփելով տվյալ բաժինը, գրքի հեղինակը հանգում է այն ճիշտ եզրակացության, որ ֆեդերացիայի կազմակերպումը բխում էր Անդրկովկասի ժողովուրդների կենսական շահերից և ամբողջությամբ համապատասխանում նրանց զարգացման ավելի էտապի պահանջներին (էջ 73)։

Աշխատության նոր, երրորդ բաժնում, որը կրում է «Անդրկովկասյան ֆեդերացիայի պատմական դերն ու նշանակությունը» խորագիրը, արվում են կարևոր տեսական եզրակացություններ ու ընդհանրացումներ։ Հեղինակը խոր վերլուծության ենթարկելով Անդրֆեդերացիայի գնահատության հարցում գոյություն ունեցող երկու տրամագծորեն միմյանց հակադիր տեսակետները, ցույց է տալիս բուրժուական պատմաբանների կարծիքի սնանկությունը, որոնք ֆեդերացիան որակում են որպես Անդրկովկասի պատմության «սև ու մութ» էջերից մեկը։ Միանգամայն հասկանալի է և զարմանալու ոչինչ չկա, քանի որ ֆեդերացիան—ժողովուրդների համերաշխության ամրոցը՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի փայլուն հաղթանակն էր Անդրկովկասում, մահացու հարված բուրժուական գաղափարախոսությանը, մասնավորապես նացիոնալիզմին։ Հիմնավորելով մարքսիստական պատմագրության տեսակետը պրոֆ. Վ. Պարսամյանը կոնկրետ փաստերից ելնելով բարձր է գնահատում Անդրֆեդերացիայի տեղն ու դերը սովետական հասարակության պատմության մեջ։ Առանց սովետական ֆեդերացիայի, առանց ազգայի՞ խաղաղության, ընդգծում է հեղինակը, Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաները չէին կարող պահպանել իրենց գոյությունը, չէր կարող զարգանալ երկրի ծայր աստիճան մայմայված տնտեսությունն ու կուլտուրան, անհնարին կլիներ սոցիալիստական ստեղծագործ աշխատանք ծավալել։

Անդրֆեդերացիայի համար տարվող աշխատանքն ու պայքարը ինքնանպատակ չէր, այն սերտորեն կապված էր սովետական բոլոր ժողովուրդների միավորման այն մեծ ու համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող շարժման հետ, որի ոգեշնչողն ու առաջնորդը Վ. Ի. Լենինն էր՝ կոմունիզմի մեծ նավավարը (էջ 75)։

Տալով Անդրկովկասյան ֆեդերացիայի պատմական դերի մարքս-լենինյան բնութագիրը հեղինակը հանգում է կարևոր տեսական եզրակացության, որ ֆեդերացիան կենսագործելով մեծ Լենինի պատգամները լիովին իրեն արդարացրեց։ Նա այն հիմնաքարն էր, որի վրա բարձրացավ Անդրկովկասի ժողովուրդների լենինյան բարեկամության անխորտակելի շենքը։ Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամության պատմության մեջ ֆեդերացիան նոր էտապ հանդիսացավ, մի պայծառ ու լուսավոր էջ։ Ֆեդերացիայի մեծ արժանիքներից մեկն էլ այն էր, որ նա ոչ միայն ամրապնդեց Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը, այլև զարգացրեց ու անքակտելի դարձրեց նրանց և Սովետական Միության մյուս ազգերի միջև եղած համերաշխությունը։

Աշխատության վերջում համառոտակի նշվում են Անդրֆեդերացիայի վերարմատն և միութենական ռեսպուբլիկաների կազմավորման պատճառները՝ առնչված սոցիալիզմի հաղթանակի հետ։ Ցույց է տրվում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական ռեսպուբլիկաների պետականության զարգացումը, էկոնոմիկայի և կուլտուրայի բուռն վերելքը ՍՍՌՄ ժողովուրդների մեծ ընտանիքում։

Պրոֆ. Վ. Պարսամյանի աշխատությունը, որը հիմնականում արժանի է դրվատանքի, ունի նաև որոշ թերություններ։ Ցանկալի է, որ ավելի հանգամանորեն ցույց տրվեր Անդրկովկասյան ֆեդերացիայի համար ծավալված միավորման մասսայական շարժման մեջ բանվորա-գյուղացիական անպարտիական մասսաների դերը, ընդգծելով այն հանգամանքը, որ միավորման, համերաշխության գաղափարը պարտիական լողունգ լինելուց դառնում է աշխատավորների սրտաբուխ պահանջը։ Հանգամանորեն պետք է խոսվեր Սովետական Ռուսաստանի և ապա ՍՍՌՄ կառավարության՝ Անդրկովկասյան ֆեդերացիային ցույց տրված օգնության մասին։ Ավելորդ չէր լինի, թերևս օգտակար կլիներ, եթե գրքում ավելի լայն տեղ տրվեր Անդրֆեդերացիայի կառավարության—Միութենական Սովետի 8-ամսյա բեղմնավոր գործունեությանը՝ Երկրամասի ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում։

Այս մասնակի թերությունները բնավ չեն նսեմացնում այդ օգտակար աշխատության արժանիքները։ Ցանկալի է, որ Հայպետհրատն այդ արժեքավոր աշխատությունը հրատարակի նաև ռուսերեն լեզվով՝ մատչելի դարձնելով այն եղբայրական մյուս ժողովուրդների ընթերցողներին։

Հ. Թ. ՍԱՀԱԿՅԱՆ